

նոցա, եւ օրհնեաց զնոսա, որով եղեն կատարեալք եւ կատարելագործք, ըստ սրբոյն Գիօնիսեայ պարտիմք նախ մաքրիլ, լուսաւորիլ եւ լուսաւորել, կատարելագործիլ՝ եւ կատարելագործել որպէս եւ աւանդեցաւ յԱռաքելոցն սրբոց, զոր ունիմք անշեղապէս, եւ անսայթաք ընթանամք զչաւիղս նոցա, նախ՝ առնուլ զձեռնադրութիւն եւ ապա տալ այլոց, յառաջ կատարելագործիլ, եւ ապա կատարելագործել, որպէս եւ է իսկ ճշմարիտ եւ հաստատուն: Եւ Պատկն խորհուրդ մեծ եւ պանծալի ըստ Պօղոսի, «խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի քրիստոս եւ յեկեղեցի,» եւ թէ «պատուական է ամուսնութիւն,» եւ Տէրն «զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեցէ:» Քանզի սա է «բո-ւ-նի-ն զո-գ-որ-նի-ն, առանց որոյ՝ շուն կոչի որ զո-գ-որ-նի: Եւ Օծումն վերջին է որ զօրացուցանէ զմեզ մտանել ի հանդէս ընդդէմ աշխարհակալին խաւարի, ըմբշամարտել ընդդէմ գոռողին, եւ առնուլ զպսակն յաղթանակի, աւանդեալ մեզ ի սրբոց Առաքելոցն, ըստ Աւետարանական պատմութեան, թէ օծանէին զբազում հիւանդս: Ուստի նոյն իւր օրհնութեան կատարի յեկեղեցիս Հայաստանեայց յամենայն ամի, եւ օծանին ամենայն հիւանդացեալք հոգևով եւ մարմնով, որով եւ ունիմք յոյս առողջութեան հոգւոյ եւ մարմնոյ, եւ փարատումն ամենայն ախտից: Են եւ այլ յողունք աւանդութիւնք մասնաւորք կարգեալք յեկեղեցիս մեր, եթէ ի տօնս տէրունականս, եւ ի սուրբսն Աստուծոյ, եւ եթէ ի պահս եւ յաղօթս, եւ ի տքնութիւնս գիշերային հսկման, եւ եթէ յարարողութիւնս ժամատեղաց եւ յամենայն կարգաւորութիւնս, թողաք զի մի լիցի ձանձրութիւն ընթերցողաց, եւ մանաւանդ գրեալքս ոչ ըստ բոլորին եւ ըստ պատշաճին գրեցաւ, այլ ըստ մասին սակաւագիծ բանիւք, թողլով ապաստան ձեր